

ԱՐՄԵՆ ԱՅՎԱՋԹԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

**ԱՍՏՎԱԾԱՑՈՒՐ Ա ՀԱՄԱԴԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
(ԿԹՆ. 1715-1725 Թ-Թ.) ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄԸ**

1605 թվականից ի վեր Արարատյան աշխարհ ուղք չկոխած օսմանյան բանակը դարձյալ այսուեղ հայտնվեց մեկ էլ 1724 թ. հունիսին¹: Երեքամյա պաշարումից հետո, սեպտեմբերի 23-ին (հին տոմարով), թուրքերով գոավեցին Երևանի բերդը²: Ավելի շուտ, 1724 թ. հունիսի 12-ին, Կ. Պոլսում կնքվեց ոռու-թուրքական պայմանագիրը, որի համաձայն, բացառությամբ Դերբենդից Մազանդարան ձգվող մերձկասայան շրջանների, որոնք 1722-1723 թթ. արդեն հիմնականում գորաված էին ոռուամերի կողմից, ամբողջ իրանական Այրակովկասը ճանաչվեց Օսմանյան կայսրության տարածքը³: Այդպիսով, ամրագրվեց օսմանյան Վարչությունն ամբողջ Արարատյան երկրի, այդ թվում նաև՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վրա՝ անհայտ և անորոշ ժամանակով:

Այս շրջադարձային փոփոխությունը բոլորովին նոր ու չափազանց բարդ խնդիրներ էր դնում Մայր Աթոռի առջև: Եթե մինչ այդ, սկսած 1461 թվականից, Օսմանյան կայսրության մեջ ապրող հայությունը, իբրև առանձին «միլլեր», պետության առջև ներկայացված էր Կ. Պոլսի հայոց պատրիարքով ու պատրիարքությամբ, ապա այժմ՝ Հայաստանյաց Եկեղեցու Օվիհապետական կառուցում գերազուն մարմին հանդիսացող Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, բնականարար, ձգտելու էր ի հաջը տիրանալ այդ մենաշնորհին: Այս հավակնությունն աստիճանաբար ամրանալու էր, որովհետև Էջմիածնի կաթողիկոսն ու միաքանները, տեսմելով իրանի շարունակվող ճգնաժամն ու քայլայումը՝ նրա մեծ մասի հայունվելը աֆղանական, օսմանյան և ոռոսական ու պարսկական տակ, առաջիկա տարիների ու տասնամյակների համար, Օսմանյան վարչությանն այլընտրանք չէին կարող պատկերացնել: Հետևաբար, Մայր Աթոռոն իր և Հայոց Եկեղեցու շահերի տեսակետից ամիսատ ու վտանգավոր էր դիտելու Օսմանյան կայսրության տարածքում Էջմիածնի գերակայության գիշումը Պոլսի պատրիարքությանը: Սակայն, ինչպես կտեսնենք, 1724-1735 թթ. այդ խնդիրը որևէ վերջնական լուծում չստացավ ու մնաց առկախ վի-

¹ Տե՛ս Ա. Մ. Արվազյան. Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին. Պատմանախրական համենս, 1991, հմր. 1, էջ 95:

² Նույն տեղում, էջ 98-100:

³ Պայմանագիրն ամրոցությամբ տե՛ս Պոլոս собрание законов Российской империи. Москва, 1839, Т. VII, докумеит №. 4531.

ճակում, որովհետև Հայ Եկեղեցու կառավարումը Ս. Էջմիածնից մեծապես դժվարացել էր ստորև քննողով մի շարք հանգամանքների բերումով:

Պարսկական ճակատների վրա շարունակվող պատերազմը քաղաքական տնտեսական ընդհանուր անապահով իրադրություն էր ատեղծել ողջ Այսրկովկասում, որոշ չափով Է՛ Թուրքիայի արևմտյան շրջաններում⁴: Արարատյան երկրի հայությունը, որ Մայր Աթոռի հիմնական հենարանն էր, մարդկային ահավոր կորուստներ էր կրել. մինչև 1725 թ. Պարսկաստանում եղած լեռն ճիզվիտ թ. Կրուշինսկուի տեղեկությունների համաձայն, միայն Երևանի գրավման ժամանակ սպանվել էր 30.000 հայ, բացի այդ՝ տասնյակ հազարավոր հայեր քշվել էին գերության⁵: Փլուզել էին Էջմիածնի տնտեսական կարողությունները, խզվել էին կապերը արևելահայության ֆինանսական մայրաքաղաք Նոր Ջուղայի և առհասարակ Պարսկաստանի, ինչպես և՝ Գանձասարի, Տաթևի, Գանձակի, Ծամախիի, այլ կարևոր կենտրոնների ու թեմերի հետ:

* * *

Աստվածատուր Կաթողիկոսի անունը ցայսօր հանդիրավի չի ներառվել 1720-ական թթ. հայ ազատագրական շարժման գործիչների շարքում, մինչեւ այդ ասպարեզում կան նրա գործունեությունը լուսաբանող պերճախոս տեղեկություններ:

Կաթողիկոսական օծումից (1715 թ. մայիսի 7)⁶ շուրջ մեկ տարի անց Աստվածատուր Կաթողիկոսը հանդիպում է հայ գինուած ապատամբությունը վաղուց ի վեր գաղտնաբար ճախապատրաստող գործիչներից մեկին՝ Մինաս Վարդապետ Տիգրանյանին: Այս երկուսի միջև Ս. Էջմիածնում 1716 թ. հուլիսի 15-ից մինչև 23-ը տևած բանակցությունները⁷ բացահայտում են Աստվածատուր Կաթողիկոսի շրջահայց ու զգուշավոր, բայց միաժամանակ բացարձակ նվիրվածությունը Հայաստանը գենքով ազատագրելու գաղափարին: 1717 թ. մարտի 14-ին Մինաս Վարդապետը ուսուական կառավարությանը տված իր բանավոր գենուցում հայտնում էր,

⁴ Տե՛ս Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուց»: Աշխատասիրեց Սամուել վրդ. Արամեան, Վեճեթիկ-Ա. Ղազար, 1978, էջ 96-97 (փաստաթուղթ 12), էջ 98 (փ. 16, 17), էջ 99 (փ. 19), էջ 101 (փ. 27), էջ 106 (փ. 37): Օսմանյան զորքը գերեզման էր ոչ միայն պարսկամահատակ, այլև, որ կարող է տարօրինակ թվական օսմանահայության բացարձակ բացարձակ նվիրվածությունը Հայաստանը:

⁵ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Մ. Ալվազյան, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., Պատմա-քամասիրական համեստ, 1991, հմր. 2 (133), էջ 113: Armen M. Alvazian, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal. (Center for Policy Analysis, American University of Armenia, Yerevan, Armenia, 1997), pp. 36-39.

⁶ ՀԱԱ, Գ, էջ 768. Մ. արքեպոս. Օրմանեան. Ազգապատու, Բ. Ա-Բ, Կ. Պոլիս, 1912-1914 (այսուհետն՝ Ա.Զ.Գ.), սյուն. 1918:

⁷ Амяно-русские отношения в 1-ой трети XVIII века. Сборник документов. Т. II, часть I. Под редакцией Аш. Иоанисяна, Ереван, 1964 (այսուհետն՝ АРО, I), док. 148, 154, с. 358, 367.

որ, լսելով իրենց ազատագրական ծրագրերի և ուսմերից սպասվող օգնության մասին, կաթողիկոսը «շատ ուրախացավ և բանավոր նրան պատասխանեց, որ այն գործը, որի մասին վարդապետն իրեն տեղեկացրեց, շատ բարի է, և նա ցանկանում է այդ գործում ծառապել և օժանդակել Նորին Յարական Մեծությանը (իմա՝ Պետրոս Ա.-ին, Ա.Ա.), միայն թե նա մեծ մտավախություն ունի շահից, քանզի դա մեծ գործ է. այնպես չստացվի, որ իրենք բոլորը (իմա՝ ամբողջ հայությունը, Ա.Ա.) ավերածության ենթարկվեն: Սակայն, եթե Նորին Յարական Մեծությունը ցանկանա Պարսկաստանի դեմ պատերազմով դիմել և իր զորքերն այդ երկիր ուղարկել, ապա թող նույն վարդապետի (իմա՝ Մինաս Տիգրանյանի, Ա.Ա.) կամ այլ հավատարիմների միջոցով նախապես իրեն լուր տա, թե ինչ է նրանց ակնկալում, իսկ ինքը՝ իր բոլոր հավատարիմների հետ, պատեմ միջոցը գտնելով, այդ գործում հավատարմոն և կարեցած չափով օգնություն ցուց կոտո»⁸:

Այդ պատասխանը գրավոր ներկայացնելով Մինաս վարդապետի խնդրանքին՝ Աստվածատուր Կաթողիկոսը խոթեմաբար առարկում է՝ ասելով. «Գրավոր այս բանը շարադրելը և (ուսաց ցարին) հավատարմություն հայտնելը անհնար է, քանզի այս գործը պետք է հույժ զադումի պահել՝ պարսկիմերից և որոշ հայերից: Փոխարենը՝ կտու վարդապետին քողարկված իմ նամակ, ուր կասվի, թե նա եղել է պատրիարքի մոտ և զեկուցել նրան ամեն տեսակ գործերից, որոնք ընդունվել են սիրով և հաճույքամբ»⁹:

Զեկուցի վերջում Մինաս վարդապետը եզրակացնում էր, որ Գանձասարի Եսայի Կաթողիկոսը լրիվ պատրաստ է դիմելու զինված ազատագրական պատուազմի և ուսմերի օգնությանը ապավիմելու, իսկ Ս. Էջմիածնի կաթողիկոսը «թեն բանավոր հայտնում էր իր հակվածության մասին, սակայն այդ գործում Եսայու պես վստահելի չէ, քանզի շատ է երկնչում շահից»¹⁰:

Հետոզա իրադարձությունները ցուց են տալիս սակայն, որ Աստվածատուր Կաթողիկոսի նկատմամբ Մինաս վարդապետի արտահայտած մտահոգությունը չափազանցված էր: Ամենայն հավանականությամբ, Մինաս վարդապետը ուսմերին դիտավորյալ էր ինտ պահում Աստվածատուր Կաթողիկոսի հետ աշխուժ կապեր հաստատելու մտքից՝ նպատակ և առաջադրանք ունենալով առավելագույնս ապահովագրել Ս. Էջմիածնի անվտանգությունը:

Ազատագրական պատերազմի այս նախապատրաստությունների շղթայում պետք է դիտել Եսայի Հասան-Զալալյանի երկու այցը Ս. Էջմիածնի՝ 1719 և 1721 թթ., որոնց արդյունքում Աստվածատուր Կաթողիկոսը արձակում է չորս կարևոր կոնդակ: Այս կոնդակները տնտեսապես ու վարչականորեն գորացնում էին Գանձասարի Աթոռող՝ շնորհելով նրան պատմականորեն Ս. Էջմիածնին ենթակա մի

⁸ APO, I, դօք. 154, ս. 368.

⁹ Նույն տեղում. կաթողիկոսի գրած նամակը տե՛ս APO, I, դօք. 148, ս. 358-359.

¹⁰ APO, I, դօք. 154, ս. 370.

շարք շրջաններ՝ Շամախին, Ծիրվանը, Շաքին, Ղաբալան¹¹: Աստվածատուր Կաթողիկոսի կոնդակներից մեկը պարզապես արտառող էր. այն ուղղված էր Գանձասարին երբեմ որևէ տուրք չտված շրջանների հայությանը՝ «ի վերայ Նախիջևանու, Գողջնեաց, Ղափանու, եւ Թիֆլիզու..., զի զկամատոր ողորմութիւնս տալով օգնեսցն պարտուց նորին»¹²:

Ավելին, Աստվածատուր Կաթողիկոսը Եսայու Ակատմամբ բարյացակամ հանրային տրամադրություն ստեղծելու շաճք է թափում առ այդ շեշտեղով նաև իր և Եսայու մտերմությունը և հորդորելով ժողովրդին. «զի ընկալցին զեսայի Կաթողիկոսն եւ զնուիրակական արդիւնս ի նա յանձնեսցին՝ որպէս նուիրակի ի Սրբոյի Էջմիածնէ զնացելոյ... Թէ պէտ մեր էիր բնական՝ եւ մեր էք, սակայն մեք մերով կամաւ եւ յօժարութեամբ դմա շնորհնեցաք ի սէր որդին եւ վասն աղքատութեան Գանձասարու Ալթոռոյն: Այսուհետեւ պարտիք հնազանդիլ եւ ընդունիլ զեսայի Կաթողիկոսու ձեր, որում ներհակըն մեզ են ներհակք»¹³:

Կարծում ենք, Եսային բազմիցս օգտագործած պիտի լիներ այս կոնդակի ավելի քան մեկ մեկնարանության տեղիք տվող այն բանաձնումը, որ Եսայու թշնամիներին դասում էր Աստվածատուր Կաթողիկոսի թշնամիների շարքը՝ «որում ներհակըն մեզ են ներհակք»: Այս բանաձնումը կարելի էր ի ցուց դնել որպէս ազատագրական պատերազմի զաղափարին Ս. Էջմիածնի լիակատար համերաշխության մի այլարանական վկայություն, որը շատերի (հատկապես՝ տատանվողների) համար Հայաստանի ազատագրության վտանգավոր ձեռնարկին միանալու մի լրացուցիչ փաստարկ ու դրդիչ պիտի ծառայեր:

Այս կոնդակները միտված էին զգալիորեն ամրապնդելու առաջիկայում սպավող ազատագրական պատերազմի մեջ առաջամարտիկի դեր ստանձնելու ընդունակ (և այդ առաքելությանը եռանդունորեն նախապատրաստվող) արցախահայության դիրքերը և բարձրացնելու Արցախի հոգնոր-քաղաքական կենտրոն Գանձասարի հետինակությունը: Հիշենք, օրինակ, որ տեղական հայոց զինուժը զադունաբար վերակազմելու, արդիական զենքով սպառազինելու և զիսավորելու նպատակով՝ մոտավորապես նույն ժամանակ, 1718-1720 թթ. միջև, Ծիրվանից Արցախ էր հրավիրվել ու բուռն գրուունեություն ծավալել հայ պրոփեսիոնալ գորամրամանատարների մի խումք՝ Ավան-յուգաբաշու առաջնորդությամբ (ժամանակակիցներն այս զինվորականներին անվանում էին «շիրվանցներ», «Ծիրվանայ տղէք»)¹⁴:

¹¹ Սիմէօն Երեւանցի. Զամրո. Վաղարշապատ, 1870, էջ 84: Օրմանյանը վրիհմամբ իրուն Եսայու երկրորդ այցելության տարի է Ազի 1720-ը (Ա.Զ.Գ, պյում. 1929): Սիմեոն Երևանցին այս այցելություններին տալիս է զուտ եկեղեցական-եկեմտական իմաստ, այս տեսակետին հետևում է նաև հրամից օգտված Մ. Օրմանյանը: Եսայի Հասան-Զալալյանի երկուու այս այցելությունների մասին չի հիշատակված (տե՛ս Եսայի Հասան-Զալալյան. Պատմութիւն համառու Աղուամից երկրի: Երուսաղէմ, 1868):

¹² Սիմէօն Երեւանցի. Զամրո, էջ 84:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Արման-ռուսական ռուսական պատմությունները Երևան, 1967 (այսուհետև՝ APO, II), ձօք. 278, ս. 187-188. Բմմտ. Ա. Մ. Այվազյան, Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնակամ ռազմերը:

Չի բացապում, որ Արցախն ազատագրական պատերազմի միջնաբերդ դարձնելու ծրագրին Ս. Էջմիածինն ակնել էր աջակցել նեռն մինչև Աստվածատուր Կաթողիկոսի գամ բարձրանալը՝ տակավին նահապես և Աղեքսանդր Կաթողիկոսների օրոք, որովհետև ճրանք էլ Եսայում անախաղեակ կարգի օժանդակություն են ցուց տվել, մասնավորապես Աղեքսանդր Կաթողիկոսն առաջինն էր, որ փորձ արեց (թեկուու ապարդյուն) Շամախու և Ծիրվանի հայերին դնել Գանձասարի ուղարկի ենթակայության տակ¹⁵: Այս վարկածի ստուգումը, սակայն, առանձին ուսումնասիրության կարիք ունել:

Հսա երևույթին, Աստվածատուր Կաթողիկոսը հայության պաշտպանական կառողությունները ամրապնդելու նմանատիպ քայլեր էր ձեռնարկում առա այլ շրջաններում: Այդպիսի գործունեության մասին կարող է հուշել 1724 թ. հունիսի 1-ին Սամարինի վիճակի ժողովրդին ճրա ուղած կոնդակը, որով հորդորվում է «առատ տրօք» օգնել վաճռի առաջնորդ, Հովհաննես վարդապետին նոյն վաճռի պարիսաը կառուցելու համար¹⁶: Կոնդակը գրվել է օսմանյան ուզմական մեծ արշավաճքի նախօրեին, երբ Երևանը դեռն գրավված չէր: Ասենայն հավանականությամբ, Սամարինի պարսպի կառուցումն ու այս կոնդակը որոշակիորեն կապված էին սպավող պատերազմական գործողությունների հետ:

Եվ այսպես, 1722-1724 թթ., երբ ազատագրական պատերազմն արդեն իրականություն էր, որքան էլ Աստվածատուր Կաթողիկոսն ու հայ գործիչները ձգուում էին գաղտնի պահել հայոց զինուժի հետ Ս. Էջմիածնի կապերը, դրանք այնքան ծավալուն էին, որ ի վերջո հայտնի դարձան և՛ պարսկական, և՛ օսմանյան հետախուզությանը: Գիլամենցի՝ իմստ հավաստի աղբյուր ճանաչված օրագրի¹⁷ մեկ այլ տեղեկություն ուղարկի է խոսում այդ կապի մասին (տեղեկությունը վերաբերում է 1723 թ. ապրիլ-մայիս ամիսների միջոցին). «Մեր կաթողիկոսն (իմա՝ Աստվածատուր Համադանցի՛ Ա.Ա.) հայոց ասկարին [=գինվորության] խետ մին այ, որ յամիշաւ [=մշտապես] գաղտուկ մին սզմինու գիր ան եկի գրում: Մեր կաթողիկոսին մին գիրն կրոնուի: Էս գիրն կրերեն կուան Յարեւանալ նայիպին [=խանի փոխանորդին]:

թը Սյունիքը, Պատմա-բանափրական հանդես, 1990, հմր. 4 (131), էջ 69-71: Արցախում կենտրոնացվող հայոց զինուժը զինելու և մարզելու մահապատրաստությունների մասին համառոտարք տե՛ս M. Alavazian, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, pp. 9-10, 15-17.

¹⁵ Տե՛ս Սիմեոն Երեւանցի. Զամրո, էջ 81-83:

¹⁶ Մաշտոցյան Մատենադարամ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 42: Աստվածատուր Կաթողիկոսի այս կոնդակը վրիփել է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունից», տե՛ս Բ. Ա. (Երևան, 1959), էջ 676-685:

¹⁷ Գիլամենցի հաղորդումների արժանահավաստությունը իրավամբ բարձր են գնահատել Ք. Պատկանյանը, Ա. Հովհաննիսյանը և Լ. Լոքբարդը, տե՛ս Petros di Sarkis Gilanentz. Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and additional Notes by Laurence Lockhart. Lisbon, 1959, pp. X-XII:

Էս նայիրն Կաթողիկոսին կանչել էր տարել, թէ՝ «դու էլ աս մեզմէ դօնմիշ եկէ [=ըմբռոտացել ես մեր դեմ]»¹⁸։ Էս քո գիրն այ, որ հայոց ասկարին գրել աս։ [Կաթողիկոսն] ասացել այ, թէ «Էս գիրն ես չեմ գրել, էս թշնամու շինած գիրայ»։ Եր [նայիրը] կաթողիկոսին էլ շատ խաֆայաթ [=նեղություն] կտայ եւ ԴՌ (4000) ոսկի շառիմա [=տուգանք] յինք կառ[Ա]յու, քանի օր կպախի, լետոյ մարդ մէջ կը մկանի, բաց կը թողող»¹⁹։

Այս դեպքից մի քանի օր անց Երևանի նայիրը դարձալ կանչում է Աստվածատուր Կաթողիկոսին և խնդրում, «թէ ձեր Հայոց ասկարն շատ թուրք ա շառթում, որ ուզեմ գոն Ցարեւանայ վերայ. դու մին գիր գրէ ձեր ասկարին վերայ, որ էս երկիրն չը գոն եւ մեր մարդին դէկմիշ չնեն [=ձեռք չտան]»²⁰։

Կաթողիկոսը դժկամորեն մի նամակ է գրում հայոց զորքերի հրամանատարությանը՝ նայիրն զգուշացնելով, որ հազիվ թե զրանք ենթարկվեն իր խոսքին։ Սակայն նայիրը պնդում է՝ ասելով, թէ «թամամ Խայէրոց գլխայրն դու աս, որ յամիշայ [=միշտ] թեզ կլսեն...պիտի որ գրես»²¹։ Մեծ ճշշման ենթարկվելով, Աստվածատուր Կաթողիկոսը «մին մախիլայ գիր կը գրէ», այսինքն՝ մի կեղծ դիմում է գրում հայոց զորքերի հրամանատարությանը²², որում առերևարդեն հորդորում է հայոց զորքին չշարժվել դէպի Արարատյան երկիր, սակայն «գրին տակումն կը գրի, թէ «դուք ինչ-պէս խէրիաթ [=հարմար] կը տեսնէք, էնպէս արէք, ձեր գիտացածն ձեռաց տէք ոչ (=ձեր ծրագրերը մի մատնեք)»²³։

Արդ, «գրին տակումն» անզերեն և ոռուերեն թարգմանիչները հասկացել են իրուն «Բամակի վերջում»²⁴։ Սակայն այս «գրին տակումն» պեսը է հասկանալ իրուն նամակի բովանդակությունից դուրս՝ նույն թերթի կամ ծրարի ներքելի ինչ-որ հատվածում անպայման ծածկագրով գրի առնված տողեր, քանի որ կաթողիկոսը չէր կարող բացահայտ գրել այդ տողերը (Մայր Աթոռում ծածկագրերի գործածումը սովորական բան է եղել)²⁵։

¹⁸ Անզերեն թարգմանված է այսպէս՝ «Դո՞ւ էլ ես մեզ լրել կամ դո՞ւ էլ ես մեզմից երես թերել» [You have also abandoned us!]. - The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 49.

¹⁹ Տե՛ս «Ժամամակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանեցի», Գլուխ 104.- «Կոռում Հայոց աշխարհին», 1863, հմր. Գ, էջ 196:

²⁰ Նույն տեղում, Գլուխ 105, էջ 197:

²¹ Նույն տեղում:

²² Ոռուերեն թարգմանության մեջ «մախիլա»-ն ճիշտ չէ՝ «паписал письмо в обиходных выражениях» Петрос դի Սարգիս Գիլանեց. Դիւենիկ օսած Իսպագան աֆղանամ, ս. 40, անզերենում ճիշտ է՝ «a false letter» (The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 49, note 3):

²³ «Ժամամակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանեցի», Կոռում Հայոց աշխարհին, 1863, հմր. Գ, էջ 197: Անզերեն թարգմանության միջից լիկ դուրս են ըմկել ձեր գիտացածն ձեռաց տէք ոչ» բառերը (The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 50), իսկ ոռուերեն թարգմանությունը ճիշտ է՝ «ու վաճառելու առնվածություն» (Պետրոս դի Սարգիս Գիլանեց. Դիւենիկ օսած Իսպագան աֆղանամ, ս. 40):

²⁴ The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 50; Պետրոս դի Սարգիս Գիլանեց. Դիւենիկ օսած Իսպագան աֆղանամ, ս. 40.

²⁵ Մայր Աթոռում ծածկագրի Աշամների գործածության մասին տե՛ս Դիւան հայոց պատմութեամ: Աշխատասիրութեամբ՝ Գիւտ Աղանեանցի: Գիւր Գ, Թիֆլիս, 1894, էջ 842-852. Գիւր ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 463:

Հայկական զորքի հրամանատարությունը մի պատասխան գրությամբ հայտնում է, որ կաթողիկոսին հարգելով, նրանք չեն շարժվի դեպի Արարատյան երկիր, թեև ճախապես այդպիսի մտադրություն ունեին, և պահանջում է Մայր Աթոռուն ու հայությանը չեղող։ «Մենք ուզում ինք գինը ձեզ վերայ, չումքի մեր կաթուղիկոսն մեզ գրել եր՝ թէ՝ «սոքա մեզ բարեկամ ան, սոցա դէքմիշ չնեք եւ դէս չգէք», մեր կաթուղիկոսին խաթեր խամար էլ եկիմք ոչ, յետ դացանք։ Չուն որ մենք ես մարդայորութիւնն արարինք, պիտի որ դուք էլ մեր կաթուղիկոսին եւ իր թամամ վաճրէրին և միայբանոց եւ տեղին խայերին ջառէք՝ լեկ աղաթօվ պախէք»²⁶:

Սակայն, որոշ ժամանակ անց Երևանի հայերը հանդիմանում է Աստվածատուր կաթուղիկոսին կեղծ համակ գրելու համար, քանի որ հայկական զորքերը հաջողությամբ շարունակում են ընդլայնել և ամրացնել իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները։ «Նահան կաթուղիկոսին կկանչէ, թէ՝ «քոյ Խայերն թուրք ջառթեղջ իվելայցուցել ան, քո գրած գիրն մախիլայ էր գրած. մենք ել քեզ հավատման չենք եւ էստոնք քեզ թողման չենք»²⁷:

Այս իրադարձությունները Գիլանենցին հայտնել է դեպքի պահին Էջմիածնում գտնված Մ'Կրտիչ վարդապետով, որը ճշտում է միայն, որ Աստվածատուր կաթուղիկոսի համակը հասցեագրված էր «Հայոց ասկարի մեծայորին»։ Ամենայն հավանականությամբ, համակը ստացողն ու դրան պատասխանողը Արցախի հայոց զորքերի գլխավոր հրամանատար Ավան-յուքբաշին էր, և ո՛չ Դավիթ-բեկը, որի ուժերը քանակապես մոտ երկու անգամ զիշում էին (շուրջ 20000 զինվոր) Արցախի հայոց քանակին ու դեռևս Սյունիքի ներսում լուծելիք բարդ խնդիրներ ունեին²⁸։ Ի դեպ, 1723-1724 թթ. հայ զինվորության չորս խոշոր հատվածները (Արցախ, Սյունիք, Երևան, Նախիջևան) խկապես հպատակ են ունենել ստեղծելու միասնական ազատագրական ճակատ, որն Արցախի հայ հրամանատարությանը 1724 թ. սկզբին դեռևս հնարավոր էր թվում «Եւ էս Խայերին մէշտեղն Քուրդ [=մահմետական ուժեր] կայ։ Էս Խայերն ասում ան, թէ... «Կուգնանք Քուրտին վերէն, քուրտն փշացնենք, որ տեղէս (իմա՝ Արցախից, Ա.Ա.) մինչի Երևան ողջ Խայեր առ Ա. [1] կուտառնան»²⁹։

Բայց այս ծրագիրը, տարբեր պատճառներով, իրագործել չի հաջողվում³⁰:

²⁶ «Ժամանակագրութիւն Պետրոս ոի Սարգիս Գիլանէնցի», «Կոումկ Հայոց աշխարհին», 1863, հմր. գ., էջ 197:

²⁷ Նույն տեղում, Գլուխ 107, էջ 197:

²⁸ Տե՛ս Ա. Մ. Այվազյան, Իրադարձություններ Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ուազմերը Սյունիք, էջ 63-80։ Դավիթ-բեկի տրամադրության տակ գտնվող մարտիկների ըմբիանուր թիվը ճշտել ենք 1720-ական թթ. հայոց զորքի թվաքանակին Ավիրված դեռևս ամտիա մի հոդվածում։

²⁹ APO, II, մօք. 239, ս. 99, Ա. Մ. Այվազյան, Իրադարձություններ Այսրկովկասում 1723 թ., էջ 77-78:

³⁰ Armen M. Alvazian, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, p. 46. Ա. Մ. Այվազյան, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խամությունում 1724 թ., էջ 102-114։

Մեկ տարի անց, 1724 թ. մարտի 13-ին, Ս. Էջմիածնից մի նամակ էլ է հասցեագրվում Արցախի «իշխանաշուր իշխանացադ գլուխ կարգեալ... պարոն Աւան բեկ ուղբաշուն»³¹: Այս նամակը գրված է օսմանյան խոշոր հարձակման նախաշեմին, նրանում Արարատյան երկրի հայության ու նաև պարսկական իշխանությունների առումից շտապեցվում է ուստական զորքերի խոստացված (սակայն՝ երբեք չիրագործված) առաջնահացումը: Հետաքրքիր է, որ նամակն ստորագրել է ոչ թե Աստվածատուր Կաթողիկոսը, այլ Օրա աթոռակալ Հովհաննիկը: անշուշտ, սրանով դարձյալ փորձ էր արվում հնարավորին ապահովագրել կաթողիկոսի անձը հետագա հնարավոր բարդություններից:

Տարբեր աղբյուրներից Ս. Էջմիածնի համերաշխությունն ու համագործակցությունը հայ ազատագրական շարժմանը հայտնի էր դարձել նաև օսմանյան հետախուզությանը: 1723 թ. ապրիլի 2-ին Էջմիածնի այցելած թուրք դեսպանը Աստվածատուր Ա. Համադանցի Կաթողիկոսին (1715-1725) մեղադրում էր, թե «որու էլ մեծ սուչի (=հանցանքի) տէր աս, որ Ըուստին խնտ մին աս դացել, էսչանը խայ աս կանգընացուցել, որ ասում ան, թէ ԿՌ (60 000) խայ եարադով հազիր ան (=զինված պատրիաստ են [կովելու])»³²:

Այս գաղտնի կապը հաստատում են նաև 1724 թ. փետրվարի 25-ին Ղարաբաղից ուղարկած պատվիրակները, որոնց ասելով՝ հայերի «Արարատյան պատրիարքը (այսինքն՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսը - Ս.Ա.) Ղարաբաղ՝ Եսայի Կաթողիկոսի մոտ հաճախակի մարդկանց է ուղարկում ու նամակներով հավատիացնում նրան՝ նրա հետ իր ուղեցած համաձայնության մեջ»³³:

Այս առումով դիտելի է, որ 1725 թ. սկզբին Գիլանից հայկական էվկադորի հրամանատարներից մեկի՝ Ռուսաստանում գտնվող հայ ազատագրական շարժման ներկայացուցիչ Միհնաս վրդ. Տիգրանյանին գրած նամակից պարզվում է, որ վերջինիս գործունեությունը բացահայտվել էր փոքր-ինչ ավելի շուտ, մոտավորապես 1720 թ., ահա այդ հատվածը. «Հայր սուրբ, այժմ ամենուրեք հայտնի եղավ մեր քանը. այսքան տարի ոչ ոք չգիտեր քո խորհրդի և գործունեության մասին, այլ և այն քանի մասին, որի համար դու այդտեղ ապրում ես: Ահա այժմ իհնց տարի է, ինչ մեր քանը հայտնի դարձավ բոլոր դավաճաններին...»³⁴:

Այսպիսով, տարածաշրջանում անսպասելիորեն հայտնված հայկական խոշոր զինուժի կապերը Ս. Էջմիածնի հետ՝ իրանական և օսմանյան տերությունների խոր անվտանգությունն էին առաջացրել Մայր Աթոռի Ակատամամբ:

Մեկ տարի անց, սակայն, իրադրությունն այլ էր. ոստինը 1724 թ. հունիսին Կ. Պոլսում պայմանագիր էին կնքել Բարձր Դուռը հետ՝ համաձայնելով գրեթե ամբողջ Այսրեկովկասի և հյուսիսային իրանի օսմանյան ուղմակալմանը և բավարար-

³¹ APO, II, ձու. 228, ս. 85-86.

³² «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգսի Գիլաննցի». Կոումկ Հայոց աշխարհին, 1863, հնր. Գ, էջ 196:

³³ "օճակօջ օնոյ պատրիարք Արարակոյ, որու առ պատրիարք Կարաբախ կ պատրիարք Իսայ, ուսկանական կույսամասն օգուածուած է նույն պատրիարքի համապատասխան պատրիարքին": ԱՊՕ, II, ձու. 291, ս. 206.

³⁴ Ա. Հովհաննեսի կապը. Պետրոս դի Սարգսի Գիլաննցի (Ս. Էջմիածնի, 1916), էջ 17, 26:

վելով սուկ մերձկասպյան շրջանների գրավմամբ, օսմանցիները մեծ զորքով ներխուժել էին Արևելյան Հայաստան և հյուսիսային Իրան, Թիֆլիսն ու Կոստանդնուպոլիսը առանց դիմադրության անցել էր նրանց վերաբնողության տակ, իսկ հայկական գինված ուժերը, հույսն սխալմամբ դնելով ուսական խոստացված առաջխաղացման վրա, ինչին կորցրել էին ճախաձեռնությունը և պարփակվել Արցախ-Սյունիք լեռնային տարածագույուս։ Աստվածատուր Կաթողիկոսը, եկեղեց փոխված հանգամանքներից, 1724 թ. սեպտեմբերի սկզբին շահ Թահմասպ Բ-ի մոտից վերադարձվուկ Մայր Աթոռ, խոթեմորեն կատարում է օսմանցիների առաջադրանք-խոնդրանքը, այն է՝ ստանձելով Երևանի բերդի անձնատվության բանակցություններում զլիավոր միջնորդի դերը³⁵։

Աստվածատուր Կաթողիկոսը շանում էր վաստակել օսմանցիների վատահությունը՝ անշուշտ նպատակ ունենալով Մայր Աթոռի և նվաճված տարածքների հայության շահերի պաշտպանությունը, բայց 1725 թ. հոկտեմբերի 10-ին առ դժբախտ պատահարի զոհ դարձավ³⁶։ Սա ել մի նոր ուժգին հարված էր Էջմիածնի իշխանությանը։ Մայր Աթոռն անկաթողիկոս մնաց մինչև 1728 թ. սկզբները, երբ Կարապետ Ովզնեցին (որը Ամենայն Հայոց Կաթողիկոս էր ընտրվել 1726 թ. փետրվարին Կ. Պոլսով) վերջապես ժամանեց Էջմիածինը³⁷։

Վերը թվարկված հանգամանքների բերումով՝ 1724-1728 թթ. Էջմիածինը պարզապես ի վիճակի չէր կատարելու իր սովորական կառավարչական գործառույթները և որևէ լուրջ մրցակցություն առաջարկելու Կ. Պոլսի պատրիարքությանը, որի գերինեղինակավոր Հովհաննես Կոլոտ Պատրիարքը (1715-1741), օգտագործելով Բարձր Դուռ ինտ իր վաղուց ի վեր մշակած կապերը, շարունակում էր քրտնաշան աշխատել թե՛ օսմանցիների նվաճած պարսկական նոր ճահիանգներում, թե՛ կայսրության նախկին սահմաններում ապրող հայության օգտին։

³⁵ Տե՛ս Judasz Tadeusz Krusinski. The History of the Late Revolutions of Persia. Vols. 1 and 2. New York, 1973 (Լոնդոնի 1740 թ. հրատարակության վերատպություն), Vol. 2, p. 178. Բնմտ. Արքանանշանցի. Պատմութիւն պատերազմաց 1721-1736 թուի: Հրատարակեց Սահման Շնմենյան. Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 31-35։

³⁶ ՀԱԱ, Գ, էջ 801։

³⁷ Տե՛ս ՀԱԱ, Գ, էջ 804. Ա.ԶԳ, այում. 1954։